

ՍՄԲՍՏ - ԲԻՒՐՍՏ

ԼԵՌՆԱԿԱՆԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

(ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ)

(Ա. ՇՐՋԱՆ. 1862-1870)

Ներկայ յօդուածաշարքով բախտն ունինք Ամանորի առթիւ սիրուն կաղանդէք մը նուիրելու մեր սիրելի ընթերցողներուն: Կը բաւէ Սմբատ-Բիւրատի անունը: Անոր վէպերուն ծանօթ թարմ ու ջերմ շունչովն է այս ինքնակենսագրութիւնն ալ: Ըսենք սակայն իսկոյն՝ թէ այդ ինքնակենսագրութեան մէջ - մանաւանդ առաջին մասին - ամբողջապէս գիւղական կեանքի պարզ ու գեղեցիկ պատկերն է որ կը ցոլայ. գիւղը՝ իր բոլոր հմայքներով, բնութեան տեսարաններով, ուր կ'ապրի մշակը իր արդար քրտինքի աշխատանքով՝ հակապատկերն է քաղաքի հեղձուցիչ և շահամուլ մթնոլորտին: Եւ անդին ազատութեան տենչը՝ ընդդէմ ճնշման և հարստահարութեան, և հետեւորդ պոռթկումը, որ տառապանքի ու զոհողութեան ճամբան կը բանայ անխուսափելիօրէն: Խմբագրութիւնս իր ընթերցողներուն հետ խորին շնորհակալութիւն կը յայտնէ պարոն Վաղինակ Բիւրատի՝ որդի նահատակ վիպագրին՝ որ մեր տրամադրութեան տակ դրաւ այս հետաքրքրական ինքնակենսագրութիւնը. անով եթէ տխուր, շատ տխուր անցեալը պատկերանայ մեր մէջ, սակայն մեր նոր սերունդին համար հարկաւոր է հին կենցաղի, մեր մօտաւոր հին աշխարհի պատկերը: Կենդանի շունչով ազգագրական էջեր՝ որոնց արժէքը մեծ է, այսօրուան և մանաւանդ վաղուան համար.

ԽՄԲ.

Ա.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

(Բանտին մէջ գրուած)

Կան մարդիկ, որ կ'ապրին կղզիացած, իրենց կեղեւին մէջ քաշուած խղունջի մը պէս, միայնութեան խաղաղասէր գիրկը, առանց ներգործելու դարուն, ուր կ'ապրին և որու հոսանքին մէջ կը կորսուին, կան ուրիշներ որոնք՝ իրենց նմաններուն օգտակար ըլլալու տենդէն բռնուած՝ կը նեւտուն ընկերային փոթորիկներուն մէջ, մերթ յաջող, մերթ ձախող ելեւէջներով, մինչեւ որ ի վերջոյ կը հասնին իրենց հետապնդած նպատակին, կամ անոր զոհը

կ'ըլլան: Առաջինները՝ պատմութեան չեն վերաբերիր, կամ, այլապէս, կենդանաբանութեան հարուստ նիւթ կը մատակարարեն, տարբերութիւն մը չգտնուելով իրենց ու անբաններուն ապրելակերպին միջեւ. մինչդեռ վերջինները, որոնք մարդկութեան համար դժբախտներ են, առաջ երջանիկներն են ու հետեւապէս, ճշմարիտ թշուառները, կ'իշխեն սակայն իրենց դարուն, ու իրենց կեանքը կը շարունակեն ապագայ սերունդին հետ՝ որուն դաստիարակութիւնը գծած

են իրենց, իրենց օրինակովն ու քարոզած սկզբունքներովը: Այս աղէտի հերոսները չեն հասարակ ու սոսկական մահկանացունքէն, որոնց անձուկ է մտածումը, և զձուձ՝ կեանքի նպատակը, այլ, հանրութեան պաշտուածներն են անոնք և պիտի չանհետանան, ցորչափ շրջի մարդկութիւնը մեր մոլորակին վրայ և ցորչափ մեր մոլորակը դառնայ իր առանցքին վրայ:

Ո՛րքան բարեբախտ եմ որ մարդատեսաց մենակեաց մը չեմ եղած ես և ո՛չ ալ ընդունակ եմ ըլլալու, թէեւ յաւակնութիւնը չունենամ վերջիններուն պատկանելու, միայն, բուռն իղծէ մը տանջուած եմ տղայ հասակէս. իմ տոհմիս ծառայելու իղծը, որ տակաւ աճած է հոգիս հրդեհած ու վերջապէս բերած ձգած է զիս հոս, ողջբուր գերեզմանը, ուր կը թաղուի ամէն յոյս և ուր ամէն ոյժ կը ջախջախուի...:

Ահա՛ մութը նորէն կոխեց. բանտապաններն արթուն, հաւերու տարմի մը պէս բանտարկեալները կը քնն իրենց առջեւէն ու կը տանին կը լեցունեն խուցերը, խոնաւ, ցած, տեսակ մը նկուղներ, որոնց մէջ դիակները կը խլրտին...: Ականջներս կը խոցոտեն շառաչները շղթաներուն, որոնք դատապարտուած ոճրագործներուն կամ մահապարտ անմեղներուն ոտքերը կը պրկեն: Խուցիս թիթեղէ կանթեղին արիւն նոս նշոյլը՝ պաղ ու ճերմակ պատերը կը ծեփէ, հոս ու հոն ստուերներ նկարելով, ու ես, այդ կանթեղին ու այդ ստուերներուն հետ կ'երազեմ...: Իրիկունէ արդէն, հսկող ցաւս մոռնալու համար, բանտերու ղեղահատէն կ'ըլլած էի հատ մը, մոռացումի ու աստուածացումի ղեղահատէն, որ միակ սպեղանին է բանտարկեալներու վէրքերուն...: Ո՛հ, օրհնեալ խաշխաշ, դրախտին հրեշտակներուն բուրվառներէն ծաւալող ծուխ, ահա՛, ահա՛, հեռուն, շատ հեռուն, հայրենի լեռներուս վեհափառ ուրուականները կարգով կու գան կ'անցնին առջեւէս. ըղեղը, որ գլխուս խորքը կը ննջէր, յիշատակներու մոխրակոյտ մը, կը սկսի քրքրուիլ, մոխրին ներքեւ թաղուած ամբողջ անցեալ մը կը սկսի արծարծել.

անցեալը կը նշուէ ու զնտանին թանձր արհաւիրքը կ'արթնցնէ: Հոն, հեռաւոր հորիզոնին երկայնքը, կապոյտ երկնի ու կարմիր արեւի տակ, ազատ լեռնականներս կը կայտին. հոն, աւելի վերերը, կարկուտի տարափներուն տակ, Պէլիտի ձիւնապատ գագաթին վերեւ, որոտացող ամպերուն միջեւ, ամբոխ մը կ'եռայ, կը վարգէ, որսորդներու ամբոխ մը, լեռն ի վեր կը մագլցի, կ'որսայ եղնիկներն ու կաքաւները լեռներուն. հոն, աւելի վարերը, գետակի մը ծառապսակ կողերը քերող անցնող մանկերամը կը նշմարեմ, որ հօտը կը տանի արօտավայրը...: Եօթնեղբարց սառնոր վտակին եզերքը՝ որսորդներուն ու հովիտներուն ժամադրավայրը, հոն կը հաւաքուի հայրենիքիս երիտասարդութիւնը: Դարձեալ վարը, հաւաքը բլուրներուն ստորոտը, Շուղրս կը զոռայ փրփրուտ, գետակս հայրենի, որ ապառաժները կը ծեծէ և յոխորտնթաց կը վազէ իր արեւելեան ու արեւմտեան ափերուն երկայնքը ցուցահանդէս մը կը պարզուի կանանչ թուփերու և ծաղկած փշաթիւներու: Զորեպան ու այգեպան, կը վազեն իրենց վաստակներուն. այգեստաններուն գետինները սեւցած են. մշակները փորած են այգիները, յօտել կը սկսին փորած են այգիները, զարժում մը, եռուզեռ որթատունկերը. շարժում մը, եռուզեռ մը, կեանքի կռուին պարզագոյն ու նահապետական ձեն է հոն...: Աւաղ, երազ էր այս ամէնը, բանտին դռներուն ճռնչոցէն ցնցուեցայ ու դարձեալ ինքզինքս գտայ ցուրտ իրականութեան գիրկը: Վայրկեալս մէջ փարատեցաւ տեսիլքը. իսկոյն անհետացան հեշտալի պատկերները, ցցուեցաւ նորէն աչքիս դէմ՝ ահռելի կացութիւնս. աւելի՛ յստակ ու պայծառ տեսայ ինքզինքս, չորս պատերու մէջ արգիլուած: Այս անհաշտ, վատ ու սպաննիչ միջավայրում կեանքեր կը հիւծին ու կը փճանան բռնակալի մը բացարձակ կամքին ու հաճոյքին համար. այս երկրին մէջ՝ ապրելէ զրկել կը փորձեն ամէն անոնք որոնք իրեւ մարդ ապրիլ փորձած են. ոճիրներուն ամէնէն սոսկալին է ստրկու-

Թեան գիտակցութիւնը, լուծին ատելու-
թիւնը, ազատագրութեան բաղձանքը: Ահա՛
օրէնքը, ահա՛ դատաստանը:

Հոս, բանտերու ժամացոյցները կը զար-
նեն փակուած դռներուն ձոնչոցը նորոգել
տալու համար. ձօճանակը զանգաղ կը
ձօճէ հոս, թէեւ հասարակածին վրայ չը-
գտնուիմ. օրերը՝ հոս ամիսներ են ու ա-
միսները՝ տարիներ. մէն մի րոպէ՛ արեան
բիծ մը կը գծէ դռներէն մէկուն շեմքը.
երէկ անմեղ մը զատապարտեցին իրրեւ
մարդասպան. վաղը գող մը պիտի արձակեն
իրրեւ ճգնաւոր. կամքը, բռնաւորին բաց-
արձակ կամքը լոկ կը վարէ այս մարդ
թուանշաններուն ճակատագիրը: Բանտա-
պան ու բարապան երկուքն ալ ոստի-
կաններ, մէկը՝ պատիժին, միւսը՝ օրէնքին,
երկու բիրտ ուժեր. որոնց ձեռքին մէջ է
կեանքը կամ մահը հոս նետուած մարդուն,
որ զատակարգին ալ պատկանի ան:

Ե՛հէ... ո՛ր տարին զիս խորասուզեցին
սեւ մտածումներս. անյուսուածիւնը դեռ
շատ հեռի է տիրանալէ ըղբղիս. ես դեռ
շատ նիւթեր ունիմ սպառելու, դեռ անոր
ճիրաններուն անձնատուր չեղած, եթէ
բեռը ծանր է, գիտեմ վրայէս թօթուել
զայն. ահա՛ դուրս կը թռչիմ, կը թափա-
ռիմ ազատ անհուններուն մէջ, կը ճեմիմ
անցեալիս, խամրած օրերուս բուրաս-
տանը, կը քաղեմ թափթփած թերթերը,
կապելու համար փունջ մը վայելուչ ու
գերեզմանիս արժանի...:

Օրհնեալ ըլլաւ ուրեմն ո՛վ ճերմակ
թուղթ, որ կոյսի պէս ամբիժ՝ կ'ընդու-
նիս ճնշուած սրտին առաջին տպաւորու-
թիւնները: Եկէ՛ք, եկէ՛ք ուրեմն, իմ ոսկի
տարիներ, իմ միամիտ մանկութեան օրեր,
կարգով եկէ՛ք, շուրջս պար բռնեցէ՛ք,
և ներկայիս տանջանքները մոռցուցէ՛ք:
Ըրուած, զատապարտուած ողբ մըն եմ,
պատրել պիտի փորձեմ ինքզինքս, գէթ
ատեն մը, նկարելով ու զրի առնելով ինչ
որ կը զգամ, ինչ որ կը խոկամ, պատ-
մելով արկածներս ու երազներս:

Երանի թէ այս յուշատետրը չկնքած,
գոնէ անգամ մըն ալ առիթ ունենայի

փարելու հողերուն ու քարերուն, ջրերուն
ու ծառերուն իմ աւանին, որուն կարօ-
տովը կը հալիմ, որուն յիշատակովը կ'ա-
պրիմ, և որուն ճակատագիրը կ'ողբամ,
չորս անտարբեր պարիսպներու մէջ ար-
գելափակ...:

22 Սեպտեմբեր 1893

Հալէպ-բանտ

(Ընդօրինակուած Գոսթանձա: 1907 Սեպտ.
24): Բնագրէն ընդօրինակուած Պրիֆայա
(Լիրանան)

Բ

ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒ

Արեւելքէն՝ եռանկիւնի սրակատար լեռ
մը. արեւմուտքէն՝ թաւուտներու և բլուր-
ներու երկարաձգուած շարք մը, հիւսիսէն՝
ապառաժուտ, ցիւց ու ամպերէ ծրարուած
սարահարթ մը. հարաւէն՝ ձորերէ կտրուած,
լեռնակներէ կարկտուած, անդին շեղ
զարեւանդներ. այս ամբողջը կը շրջա-
պատէ աւան մը, հիւսիսային սարին ոտքը,
դէպ է հարաւ նայող ապառաժներու կարծր
կողերուն վրայ նստած, որուն վրայ
կարծես թէ յաւիտենական հսկողութեան
պաշտօն ստանձնած են շրջակայ բար-
ձունքները: Բերդաքաղաք մըն է ան,
Միջնաբերդովը, և Տելդայի մը ձեւն ունի:
Արեւելքի փոքրիկ գետակը, որ ձմեռը
հեղեղի կը փոխուի ու ամառը կը ցամբի,
և արեւմուտքի Շուղըր — սառնապատ լեռ-
ներէն բխելով հեռզհեռէ աճող գետակը —,
աւանին երկու կողմերէն քերելով կու գան
իրարու կը խառնուին հարաւային եզերքը,
ընդգրկելով 1500 տներէ բաղկացեալ
գիւղաքաղաքը՝ որ է Ջեթուն, իմ ծննդա-
վայրս:

Հայրս, որ, այս տողերը գրելու պա-
հուս, Ջեթունի մէջ, իր հրայրեաց եկե-
ղեցիին որմերուն տակ նստած, հառաչա-
ձայն կ'ողբայ իր դեռահասակ զաւկին
բանտարկութիւնը, երեք քառորդ դարու
ալեւոր քահանայ մըն է, մանուկ հասակը
նուիրած ուսման, այնպէս որ այսօր, լու-
սամիտ և բանգէտ եկեղեցական մը կը

նկատուի, կիլիկեցի կղերականներուն մէջ
թերեւս միակը, որ լաւ գիտէ հին ու նոր
հայերէնը, քաջահմուտ հայ եկեղեցիին
հնաւանդ կարգերուն ու կանոններուն: Իր
գրասէր հակումներուն կը պարտիմ ծննդ-
դեանս ճիշդ թուականը գտնելու դիւրու-
թիւնը, շնորհիւ մագաղաթէ ձեռագիր ա-
ղօթագրքի մը՝ որուն վերջին թերթին վրայ
ինքը խնամով նշանակած է հետեւեալ յի-
շատակութիւնը.

« Յամին փրկչական 1862 ի յամսեանն
Մարտի, յաւուրն երրորդի՝ պարգեւեցաւ
մեզ ի Տեառնէ ուստը մի, որոյ անուն
կնքեցաւ Սմբատ »:

Հետեւապէս, իրաւունք ունիմ Ջեթունցի
կոչուելու, ինչպէս որ կոչուած են հայրս
ու մայրս, հաւերս ու հանիներս, եթէ
դժբախտութիւն մը կայ ինծի համար, ցեղիս
ստոյգ ճիւղահամարը չունենալս է ան.
պատճառը՝ անբնական ու անզարմանելի
հակասութեամբ մը՝ հաւիս արտառոց ու-
սումնաստեցութիւնն եղած է, մտեաննե-
րու և թղթերու երդուեալ թշնամի հաւիս,
որ լեռնակուն յառաւորի՛ մը պիտի ըսուէր:

Ինչպէս որ ըսի, հայրս ժամանակին
մարդն էր, ունենալով բաւական պաշար
հմտութեան, իր զուտ ինքնօգնութեամբը
ժողոված. իր մանկութեան ժամանակ չը-
գտնուելով հասարակաց վարժարան, յա-
ճախած է ոստայնանկ վարպետի մը քով,
առտուրնէ իրիկուն ծնկագուն, տաժանքով
ու ձեծի տակ մայրենի լեզուն սովորելու
համար:

Այսպէս իր պարկեշտութեան ու օգտա-
կար գործունէութեան մէջ, յաջողած է
ժողովուրդին համակրանքը գրաւել և, բա-
ցառիկ պարագայով մը, 21 տարու հա-
սակին ձեռնադրուիլ քահանայ, Ս. Յակոբ
Մժրնայ հայրապետին եկեղեցիին վրայ:

Մայրս, որ բանտարկութեանս վիշտէն
ինկած, կաթուածահար մեռաւ այս տարի
Յունվարին, Ջեթունի Պաղ-աղբիւրը կա-
ռուցանել տուող համբաւաւոր Գարապո-
յաճիին թոռն է ու Ջեթունի Շօրվայեան
իշխանագուն գերդաստանէն սերած, բա-
րեպաշտ ու հայրենասէր կին մը: Յաճախ

կը պատմէր թէ՛ Ազիզ Բաշայի մեծ պա-
տերազմին, 1862 օգոստոսին, երբ հա-
զարաւոր Չէրքէզ ասպատակներ յարձա-
կեցան Ջեթունի վրայ, ես, դեռ նոր ծնած
հինգ ամսուան մանուկ մըն էի. ինքը,
պատերազմի դաշտը դիմող հօրս ու երէց
եղբօրս Գէորգին պաշար ու մթերք տա-
նելու ստիպուած, ընդհանուր խուճապ
տագնապին մէջ, զիս խանձարապատ
երախայ, տարած ձգած է Շուղըրի հիւսի-
սային կողմը, ճապոն կոչուած եզերքի
ամայի պարտէզներու մէջ, ստուերախիտ
ընկուզենիի մը տակ: Յանկարծ, ձայն մը
կը լսուի թէ պաշտօնագրերը կատղած,
առաջ կը քալեն դէպ ի գիւղաքաղաքը,
աւարելու, ջարդելու բնակչութիւնն ու
բռնաբարելու աղջիկներն ու կիները: Այս
սեւ լուրը սարսափ կը ձգէ քաղաքապահ
կիներուն վրայ. կոյսեր ու հարսներ, պա-
ռաններուն աղէկտուր կանչիւններովն ու
ճիչերովը համախմբուած, կը փետտեն
իրենց մազերը, եկեղեցիներուն սալայա-
տակներուն վրայ ինկած կու լան, կ'ող-
բան, կ'աղօթեն որ այս պատուհասը շու-
տով վերնայ. ի վերջոյ խմբովին կը դիմեն
միջնաբերդին գագաթը, ուր 50 ի չափ
տներ կան, կը շարուին տանիքներուն
տներ կան, կը խորհին, կը փորձեն ամէնքը
եզերքը, կը խորհին, կը փորձեն ամէնքը
միասին վար նետուիլ այդ բարձրութենէն,
գետակին մէջ, որ 70 մետր խորութենէն
գոռալով, թաւալգոր կը շարուի յաւի-
տենական խարակներուն: Այս անձկու-
թեան մէջ կը հասնի աւետարները, բար-
ձրաձայն ազդարարելով. « Թշնամի բանակը
ցիրուցան եղաւ. Ազիզ Բաշան լեղապա-
տառ փախաւ... »:

Իսկ մայրս, պատերազմէն վերադարձին՝
կը փութայ վազել ճոռագոնի պարտէզները,
երբ արդէն արեւին վերջին ճառագայթ-
ները քաշուած Սուրբ տէրէի ետին, բլուր-
ներուն ու ձորերուն վրայ ձգուած էր մութ
վարագոյր մը. հոն, կանանչ խոտերուն
մէջ, ընկուզենիին բունին տակ, զիս կը
գտնէ խոր քունի մէջ ընկղմած...: Ո՛վ
երջանիկ մանկութիւն, գերծ ամէն կիրքէ
ու հոգերէ. գետափը մոռցուած, մինակ,

